ԳԱՒԱՌԱՑԻՆԵՐՈՒ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

Ա. ՏԱՐԻ | 30 ՓԵՏՐՈՒԱՐ 1912 | ԹԻՒ 10



Խմբագրապետ
Մ. ԻՓԷԿՃԵԱՆ

Արտօնատէր
Հ. ԹԱԳԻԳԵԱՆ


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


[illegible] [illegible]նտութիւն եւ համագործակցութիւն (խմբ.) — ՄԻՆԱՍ ԻՓԷԿՃԵԱՆ
Դեղ[illegible]ներու (բրգ.) — Գ. ԷՍՄԷՐԵԱՆ
Պատշօնագ[illegible]երգ Մարզուանի Ս. Դ. Հ. Կ. Կ. Զ. Միութ. — Մ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ
Գաւառ[illegible]ին դերը քաղաքակրթութեան մէջ — ԱՐՍԷՆ ՄԱՆԿՈՒՆԻ
Մեր [illegible]արմարազոյն բնտրելիները — Գ. ԱԹԷՇԵԱՆ
Գաւառային Լուրեր



ԱՄԱՍԻԱ

Տպագր. ՅՈՎՆԱՆԵԱՆ եւ ԽԱՐՏԸՄԵԱՆ

## «ԱՄԱՍԻԱ»Ի ՀԱՍՑԷՆ

آماسیه‌ده «آماسیه» غزته‌سی مدیریتنه

*Խմբագրութիւն «ԱՄԱՍԻԱ» Կիսամսեայ Հանդէսի - Ամասիա*

Rédaction de la Revue «AMASSIA», a Amassia (Turquie d'Asie)

# ԱՄԱՍԻԱ

Կը հրատարակուի ամէն ամսու 1ին եւ 15ին, թուրքերէն եւ հայերէն բաժիններով: Թուրքերէն բաժինը մօտաւորապէս 4 էջ, իսկ հայերէնը 12 էջ. երկու բաժինը միասին միշտ 16 էջ պիտի ըլլայ: Բաժանորդներուն տարեկան 24 թիւ պիտի տրուի:

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | | | |
|---|---|---|---|
| *Թուրքիոյ տարեկան* | *1 մէճիտ* | *Արտասահմանի տարեկան* | *5 ֆր.* |
| *» վեցամսեայ* | *0.50 »* | *» վեցամսեայ* | *2.50 »* |

*Բաժնեգինը բացարձակապէս կանխիկ է: Ծանուցումներու համար առանձին նպաստաւոր պայմաններ կը տրուին:*

Տարր օրինակ «Ամասիա» պարբերաթերթին մէկ օրինակն է:

### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ամերիկայէն Տէր Ռոբէն Աւագեան մէկ տարեկան Ամասիա կը նուիրէ՝ Ամերիկա Տեարք K. Melkonian sonsի:

Վէքիլի «Բեօփրիւլեն Տէր Յակոբ Կէօզիւպէօյիւքեան» Պերլին Տէր Albert Kallenbachի.

Էրզրումէն Տէր Յ. Պօյաճեան կը նուիրէ մէկ տարեկան Ամասիա Կ. Պոլիս Տէր Յովսէփ Նաւուս Ասիլեանի եւ մէկ տարեկան եւս դարձեալ Կ. Պոլիս Օր. Մաննիկ Պօյաճեանի:

Խմբագրութեանս կողմէ մէկ, վեցամսեայ թերթ կը նուիրուի Իւնեայի Ազգ. վարժարանին եւ Տարսայի Ուսանող Միութեան:

### ԴԱԼԱՅԼԻԿ

Գեղարուեստական կիսամսեայ.

Տէր եւ Տնօրէն Հմայեակ Արամեանց: Հասցէ՝ Կ. Պոլիս փոստարկղ թիւ 125:

Դալլայլիկի իւրաքանչիւր թիւը պիտի բովանդակէ 60 էջեր, 20 պատկերով, 20 նօթաներով եւ բազմաթիւ էջերով: Դալլայլիկի նպատակն է խնամով հաւաքել, ամփոփել, ծանօթացնել եւ հրապարակել Յեղափոխական, Սոցիալիստական, Ազգային, Միջազգային եւ Ժողովրդական հատընտիր երգերն ու դիւցազներգութիւնները, որոնց հեղինակներուն պատկերներն ալ պիտի հրատարակուին, ինչպէս նաեւ անոնց՝ որոնց ծնունդ են երգերը: Ա. թիւը լոյս պիտի տեսնէ 1942 Մարտի վերջերը: Բաժնեգինն է տարեկան (20 թիւ) 20 եւ վեցամսեայ 13 ղրշ. Բաժանորդագրութիւնն անպայման կանխիկ է: Կը յանձնարարենք բոլոր գեղարուեստասէրներուն:

ԳԱՒԱՌԱՑԻՆԵՐՈՒ
ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

Ա. ՏԱՐԻ | 30 ՓԵՏՐՈՒԱՐ 1912 | ԹԻՒ 10

## Խմբագրական

# ՃՇՄԱՐԻՏ ԼԱՅՆԱԽՈՀՈՒԹԻՒՆ
# ԵՒ
# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

Մեր Ազգային պատմութեան ամբողջ շրջանին կը հանդիպինք այնպիսի էջերու, ուր շատ մը քանի աննշան պայմաններէ, մեր կղերը աւելի ազատամիտ գտնուած է իր դասուն մէջ ապրող տարբեր յարանուանութիւններու պատկանող կղերներէն. եւ այս իսկ պատճառ եղած է ներքին ու արտաքին խնդիրներու՝ շատ անգամներ համերաշխական ոգւով կարգադրուելուն։ Սակայն, երբ մեր ծանօթ սա տասնեակ տարիներու մօտիկ անցեալին վրայ ակնարկ մը նետելու ըլլանք, հոն պատկերացած կը տեսնենք անհերքելի ու բաժանում ալ մը։ Եւ ահա այդ պատճառաւ մեր ազգային դրութիւնը փոխանակ ամբողջ պահելու, բաժնուելով մի քանի հատուածներու, կազմուեցան առանձին Պատրիարքարաններ եւ Ազգապետարաններ, եւ ասոնց երկուստեք կրօնական բուռն պայքարներ, որոնք թէպէտեւ զարգացման ասպարէզին, սակայն վայրերը, բայց իսկ գաղափարական հողի վրայ չի կրցան պահել խնդիրը. այնպէս որ նոյն ազգին հարազատ զաւակները մէկզմէկ հալածեցին ամէնչն անպատուաբեր միջոցներով։

Այս վիճակը թերեւս պիտի շարունակէր դեռ երկար ժամանակ իր աւեր-

նել գործելու, ինչ 25 տարիներ առաջէն մեր ազգային գոյութեան ջնջման իրական վտանգները գուշակող խումբ մը հեռատես ու կորով անձեր երեւան ելնելով, չի հիմնէին Հնչակեան կուսակցութեան ծրագիրը, որ որոշ յօդուածով մը դաւանանքային խտրութիւնները ջնջելէ վերջ կը մղէ ամբողջ հայութիւնը ստրկութենէ դէպի գործունէութիւն, դէպի ազգային համագործակցութիւն և դէպի քաղաքացիական ազատագրում։

Այս կերպ հայութեան ստուար մէկ զանգուածը հետևելով գաղափարական այս ուղղութեան, ստիպմանաբար սկսաւ խորտակել այն պատուարները, որոնք կաթոլիկ և բողոքական հայուն ըսել կու տային «ես հայ չեմ, կաթոլիկ եմ, բողոքական եմ»։ Իսկ մայր հաստատութեան պատկանողներն ալ սկսան մոռնալ օտարական բառեր գործածելը։ Այս համագործակցութենէն մէջտեղ եկան Միրայրներ, Արփիարներ, Թումայեաններ, Գայայաններ և այլ ազգային գործիչներ, որոնց մէջ հայ արիւնն էր որ կ'եռար և հայ ոգին էր որ զիրենք կ'առաջնորդէր գործակցելու ազգային շահերուն։

Այս յեղաշրջման ենթարկուեցան հայութեան բոլոր խաւերն ալ, և այսօր, բաց անոնց ընդհանուրին, ամենախոնարհէն ամենաբարձր դասակարգի պատկանողներ, երբ ազդուած են կուսակցական այս ուղղութենէն, այլեւս իրենց մտքէն իսկ չ'անցնելով անէ մէկին դաւանանքային վիճակը, իբր հայ ոյժ և հայ անհատ կը գործեն անոր հետ, տնտեսական, կրթական, քաղաքական և այլ ասպարէզներու մէջ։

Պատմական այս հակիրճ տեսութիւնը ընելէ վերջ կ'ուզեմ անդրադառնալ քանի մ'օր առաջ տեղւոյս Ազգ. Առաջնորդարանի մէջ պատահած մէկ դէպքին։

Երիտասարդի մը հետ իբր հոկող ուսուցիչ պայմանաւորուած առանձինն էն առաջ կը հարցուի անոր դաւանանքը. և երբ կը պատասխանուի թէ կաթոլիկ է, կը հարցուի կրկին թէ կառավարական արձանագրութեան ալ կաթոլիկ է. անոր ալ երբ հաստատական պատասխան կը տրուի, այն ատեն Ս. Առաջնորդ Հօր և Պատ. Թաղ. Խորհրդոյ կողմէ կ'առաջարկուի երիտասարդին որ օսմ. թէզքէրէի արձանագրութիւնը փոխել տայ։ Երիտասարդը կը մերժէ վիրաւորուած արժանապատուութեամբ մը, և այլեւս չերթար ու չի ներկայանար պաշտօնական մարմիններուն։ Ս. Առաջնորդը՝ սահմանադրութեան համ. Դ-րդ հատորի 36րդ էջին 42 յօդուածին մէջ այս մասին բացորոշապէս շեշտուած ըլլալը յայտնած է. և յայտնեց մեզի ալ։

Բուն այդ յօդուածին ոգւոյն ու տրամադրութեան անցնելէ առաջ կը հարցնենք իրենց թէ՝ դրամի ու պաշտօնի համար դաւանափոխութեան հրաւէրը ո՞ր դարուն կը վերաբերի. և եթէ այդ երիտասարդը պաշտօնին սիրուն, իրեն եկած առաջարկը ընդունէր, ի՞նչ նկարագիր ցոյց տուած կ'ըլ-

լալ. և այսպէս դրամի ու պաշտօնի համար իր դաւանանքն ու սկզբունքը փոխելու աստիճան սողնացող մէկը ուսուցիչ ըլլալու յարմարութիւնն ունե-ցա՞ծ կ՚ըլլա՞յ։ Մի՞թէ աննկարագիր ըլլալէն աւելի գէշ բան է այլադաւան ըլլալը և մեր սահմանադրութիւնն այդքան նեղմիտներո՞ւ կողմէ պատրաս-տուած է։ Սակայն ո՛չ. մենք կը փութանք դիտել տալ Գեր. Ս. Առաջնորդ հօր թէ՝ իր ցոյց տուած 42րդ յօդուածի տրամադրութիւնն ալ արդէն ուղղա-դաւան ուսուցիչներ ընդունիլ է, քանի որ ան կ՚ըսէ թէ «Օտար լեզուաց եւ ար-հեստից ուսմանց դասատուներն ի հարկին կրնան ՕՏԱՐԱԶԳԻ կամ ԱՅԼԱԴԱՒԱՆ ըլլալ, բայց վկայեալ պիտի ըլլան իւրեանց դասատուած ուսմանց ու բարի վարուց մասին եւ աշակերտաց կրօնական, բարոյական, եւ ազգային զգացմանց վնա-սակար դիտում կամ հանգամանք պիտի չունենան»։

Ինչպէս կը տեսնենք յօդուածին տրամադրութենէն՝ օտար լեզուներու և արուեստի ուսմանց դասերը, — որոնք կրօնի դասէն զատ միւս բոլոր ճիւղերը կը նշանակեն, — կրնան այլադաւան ու նոյնիսկ այլազգի ուսուցիչներու կողմէ տրուիլ։

Հո՛ս մնացած էն կարևոր կէտը ո՛չ թէ անոր այլադաւան ըլլալն է՝ այլ աշակերտներու վրայ իր կրօնական ազդեցութիւն չի կիրարկելն է։ Հետևա-պէս Ս. Հօր և Թաղ. Խորհրդի այս յօդուածի մասին ունեցած տեսութիւն-ներուն հակասահմանադրական ըլլալը պարզելէ վերջ՝ կ՚անցնինք բուն խնդ-րոյն

Ներկայիս երբ հայութիւնը ընդհանուր համագործակցութեան և համե-րաշխութեան սերտողականութեան առջև կը գտնուի ուրիշ որևէ ատենէ աւելի գիտակից ինքնամփոփումի մը ենթարկուելու անհրաժեշտութեամբ, և երբ հան-րութիւնը որևէ ատենէ աւելի ազգային շահերու նախապատուութեան առջև տեղի տուած խնդրին, կուզէ հայուն պատմական սև մուրը անմիջապէս իր ճակտէն սրբել, երբ ամէն կողմէ պէտք ցոյց կը տրուի բոլորուիլ հայութեան շուրջ և գործել ազգային ոգիով, ահա այսպիսի աննշան խնդիրներով վիրաւորել ուժանակապատուութիւնները և պատճառ տալ որ փոքր հատուածները ան-ջատուած զգան ինքզինքնին՝ բացարձակապէս անտեսել կը նշանակէ ազգային շահերը։ Ցոյց տուէք մեզ դպրոց մը որուն մէջ մի քանի այլադաւան ու-սուցիչներ չգտնուին, և ցոյց տուէք մեզ որ այլադաւանները վնասակար եղած են կրօնական և բարոյական տեսակէտէն դպրոցներէն ներս» մենք այժմէն վըս-տահ ենք թէ ո՛չ մէկ մ՚իսկ գտնել կարելի պիտի չըլլայ։ Եւ միթէ Արշարունի Սրբազան պատրիարքին Թիւ 1 կոնդակը եւ «Ներքին միութեան բացարձակ հարկին» տակ չի դներ իր սա խօսքերովը՝ «Առանց խտրելու նաեւ ուրիշ յարանուանութեանց վերաբերող մեր ազգայիններն զի անոնք ալ միեւնոյն ազգին զաւակներն են նմանապէս եւ զուգաբախտ ու սահմանուած միեւնոյն ապագային»։ Ազգին դժբախտութիւնները հաւասարաբար կրած ենք, և ներ-

կայսրն ալ արտաքին բոլոր ստանձնութիւններ՝ ազգային անուամբ կ'ըլլան. Արդ կարելի՞ է խորհիլ թէ կաթոլիկ կամ բողոքական ուսուցիչ մը ազգային պակաս զգացում ունի քան իր ընկերը։ Եւ ինչո՞ւ իրաւամբ ու բռնկըռունքով կուզուի ժողովրդեան մէջ կրօնական խտրութիւններ ներմուծել՝ միթէ քի՞չ եղած է այդ պատճառներով տուած վնասնիս։ Ու երբ պաշտօնական մարմիններ այս կարգի խնդիրներ մէջտեղ նետելով դժուարութիւններ կ'ուզեն հանել, և կը համարձակին ըսել թէ, «մինչև հիմայ այլադաւան ուսուցիչներ կ'ընդունուէր՝ սակայն ասկէ վերջ այս սխալը պիտի չընենք.» այն ատեն մենք կը ստիպուինք խորհելու թէ, մենք որ այնքան պահանջկոտ կ'ըլլանք կարգ մը խնդիրներու մէջ դէպի մեր Թուրք հայրենակիցները, և անոնց կը վերագրենք ազգայնամոլական և կրօնական նեղ ըմբռնումներ, կարգը երբ մեզ կուգայ՝ կը մոռնանք մեր ազատամտութիւնները և վայրկենապէս կը դառնանք թունդ կրօնամոլներ։

Մենք կը խորհինք թէ ժողովրդեան շահը, ազգային շահը, մեր կրօնական այս նեղ ըմբռնումներէն պէտք է մերկացնէ մեզ, և ճշմարիտ հայրենասիրութեան սեմին վրայ կանգնած՝ կղերը, ինքը պէտք է առաջնորդէ դէպի անխտրականութիւն, դէպի անկեղծ համագործակցութիւն։

Արդ ամբողջ հայութիւնը, և մասնաւորապէս գաւառի հայութիւնը պէտք է գիտակցի իր Ազգային շահերուն և եթէ գտնուին այնպիսի կղերներ որոնք կ'ուզեն յարանուանական խտրութիւններ ստեղծել՝ թոյլ չտալ անոնց այդ ազգավնաս ընթացքը, հրաւիրել զանոնք Արշարունի Սրբազան Պատրիարքին լայնախոհութեան և ցոյց տալ ազարեանի ազգավնաս ձեռնարկները և մղել զանոնք ճշմարիտ հայասիրութեան ու անկեղծ համագործակցութեան։

МИНАС ИФЕКЖЯН

## ԴԵՌԱՀԱՍՆԵՐԸ

Դեռահասները կ'ունենան յարափոփոխ բնաւորութիւն մը և իրենց զգացած փափաքներուն նկատմամբ անմիջական զղջումք մը։ Շատ կը փափաքին և ընդհուպ կը տաղտկանան։ Անոնց կամքը զօրաւոր բայց մեծ չըլլար, այլ կ'անցնի այնպէս, ինչպէս ծարաւն ու անօթութիւնը հիւանդներուն։

Անզուսպ, եռանդուն ու կրակոտ կ'ըլլան, ու չեն կրնար երբեք իշխել իրենց անձին։ Մեծարուելու մարմաջով տարուած, չեն հանդուրժեր բնաւ աննշան մնալու, այլ կը զայրանան եթէ նախատուած կարծեն ինքզինքնին։ Կը սիրեն զատորոշումները (distinction), մանաւանդ երբ յաղթանակի վրայ է խնդիրը. վասնզի երիտասարդութիւնը նախապատուութեան նախանձաւորն է, և յաղթանակը նախապատուութիւն մը։ Այս երկու փառասիրութիւններուն շատ աւելի հոգուրդ են անոնք քան դրամին ցանկութեան։ Շատ քիչ անգամ կը տեսնուին անոնց մէջ ընչաքիրներ, որովհետև տակաւին պիտոյից փորձառութիւնը չունին անոնք։ Իրենց բնական տրամադրութիւնը չարակամութիւն չէ, այլ

պարզամտութիւն, վասնզի բազմաթիւ վտանգաւորութիւններու հանդիպած եղած չեն տակաւին։ Վստահամիտ են, վասնզի դեռ քիչ անգամ խաբուած են։ Շուտով կը յուսան, վասնզի գինիով բորբոքած մարդոց նման, անոր մէջ կ'զգան եռանդ մը որ զիրենք կ'ոգևորէ, և յետոյ անոր համար որ փորձով տեսած չեն շատ մը յոյսերու ի դերև ելնելը։

Անոնք կ'ապրին ապագային յուսով։ Յոյսը ապագային կը վերաբերի, յիշատակը ըստ ինքեան անցեալ իրողութիւններու մաս կը կազմէ։ Արդ երիտասարդներուն համար ապագան ընդարձակ է, իսկ անցեալը խիստ սահմանափակ։ Կեանքի առաջին օրերուն, իրենց կը թուի թէ յիշելու համար ոչինչ ունին, այլ պատրաստ են ամէն բանի մէջ յուսալ, և ասոր համար է որ դիւրին կը խաբուին, վասնզի դիւրաւ կը յուսան։ Եւ որովհետև իրերու մասին մեծ համարում և տաք վերաբերում մ'ունին ձեռնարկներու առջև աւելի համարձակ կ'ըլլան. երկու պայմաններ որոնցմէ մին կը բառնայ երկիւղը և միւսը կուտայ յանդգնութիւն. վասնզի մէկը որ վառ եռանդ ունի աներկիւղ կ'ըլլայ, և ան որ բանէ մը շատ ակ'նկալէ խիզախ ձեռնարկող կ'ըլլայ։ Ամչնալէ ցաւ կ'զգան, վասնզի, օրէնքի ուսումը միայն սորված ըլլալով, տակաւին չեն կրնար իբր գեղեցիկ ընդունիլ այն բաները որ չեն։ Վեհանձն հոգի մ'ունին, վասնզի կեանքի նուաստացում կրած չեն դեռ և չունին աշխարհային պէտքերու փորձառութիւնը. և յետոյ, հոգւոյ վեհանձնութիւնը կը կայանայ ինքզինքնին արժանի նկատելուն մէջ այն բանին որ մեծ է, բան մը որ արդէն յոյսին հետ հաշտ կ'ընթանայ։

Նաև շատ կը սիրեն ընել ինչ որ գեղեցիկ է քան ինչ որ օգտակար է, վասնզի անոնք աւելի զգացումով կ'ապրին քան բանականութիւնով (raisonnement)։ Արդ, բանականութիւնը ծնունդ կ'առնէ շահագրգռութենէն, զգացումը միայն գեղեցիկ բարոյականէն։

Անոնք, տարբեր տարիքներու մէջ գտնուող անձերէ աւելի, մտերիմ ապրելու միտումով, բարեկամութեան և ընկերակցութեան ճաշակը ունին, և, որովհետև շահագիտութեան չեն վարժուած, իրենց բարեկամները ընտրութեան առեն այդ ոգին չեն կրեր։ Եռանդով և ծայրայեղութեամբ ամէն բանի մէջ կը սխալին։ Հակառակ Խիլոնեան առակին, ամէն ինչ չափազանցութեան կը տանին։ Կը սիրեն չափազանց, կ'ատեն չափազանց։ Ամէն ինչ գիտնալ կը կարծեն և կը վարդապետեն (dogmatiser), և այս է պատճառը նոյն ինքն այն չափազանցութեան որ անոնք ի գործ կը դնեն ամէն բանի մէջ։ Եթէ չարիք մը գործեն, առ աւելի լրբութեան կրնայ վերագրուիլ քան թէ չարակամութեան։ Գթասիրտ են՝ առաքինութեան մը ներքև, որ զիրենք կը մղէ հաւատալու թէ բոլոր մարդիկը բարի և պարկեշտ են, որովհետև ուրիշները կը դատեն իրենց մէջ ունեցած մաքուր անբծութիւնով, այնպէս որ իրենք սիրայօժար կը հաւատան թէ ուրիշները յանիրաւի կը տառապին։ Կը սիրեն խնդալ, և մանաւանդ ծաղրող են, և արդէն ծաղրանքը մեծ լրբութիւն մըն է։

Ահա այս կը թուի ըլլալ, ընդհանրապէս, երիտասարդներու նկարագիրը։

Villemain (1)

Թրգմ. Գ. ԷՍՄԷՐԵԱՆ
Ամասիա

(1) Թարգմանուած Արիստոտէլի «ՀՌԵՏՈՐՈՒԹԻՒՆ» անուն գիրքէն։

# ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԵՐԳ

## ՄԱՐԶՈՒԱՆՔ Ս. Գ. Հ. ԿՈՒՍ. ԿԱՆԱՆՑ ԶԱՐԳ. ՄԻՈՒԹԵԱՆ

Պարտքի, իրաւանց գիտակցութիւնով,
Զարգացականներ՝ նետուած ասպարէզ,
Կամք, ոյժ ու եռանդ չեն պակսիր մեր քով,
Պայքարի կայծը հրդեհած է մեզ.
Օ՛ն, ընկերուհիք, դիմենք դէպ յառաջ,
Մերն է յաղթանակն, յառա՛ջ, օ՛ն, յառաջ.

Նախապաշարման շղթաներն ամուր,
Ալ բաւ կաշկանդեն սեռը իգական.
Փշրենք մեր վզին երկաթն ու անուր,
Կը մերժենք ստրկաց բառն անարգական.
Օ՛ն, ընկերուհիք ելէ՛ք...

Պարտք ու իրաւունք, հաւասար այր մարդուն
Ե՞ր կը վայելենք, օրէնքն անարդար
Օ՛ն, թող չախչախուի, կռուինք եռանդուն,
Մարտին մէջ մխուենք, անդուլ անդադար.
Օ՛ն, ընկերուհիք ելէ՛ք...

Հաւասարութեան փողը ուժգնակի
Հնչած է արդէն Հարաւ, Հիւսիսէն.
Զարգացման կոչին մեր հոգին հակի.
Մեր մատներն անոր դափնիներ հիւսեն.
Օ՛ն, ընկերուհիք ելէ՛ք...:

Յօրինեց՝ ՄԱՄԻԿՈՆ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

# ԳԱՒԱՌԱՅԻՆ ԴԵՐԸ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Բոլոր պետութիւններու պատմութիւնները, որոշապէս կը ցուցնեն մեզի՝ քաղաքակրթութեան զարգացման ազնիւ գործին մէջ գաւառացիին ունեցած մեծ բաժինը: Սա այնքան որոշ է և անժխտելի որ թերեւս առարկութիւն մ'իսկ չի վերցներ: Փոխադրուինք պահ մը նախապատմական անցուկ շրջանը, ուր թէպէտ չկայ գաւառացի և մայրաքաղաքացի, կայ սակայն, և որոշապէս կը տեսնուի հոն՝ այդ երկուքին ալ նախնական տիպերը. որսամոլ նահապետը և կամակատար ծառան, որոնք ի վերջոյ պիտի ըլլան մայրաքաղաքացին և գաւառացին...: Առաջինին տակ վերջինը ստրուկ կը դառնէր, ճիշդ այնպէս, ինչպէս պատմական երկիրներու մէջ ազնուական մայրաքաղաքացին կ'ուզէ ստրուկ ճանչնալ գաւառացին՝ անուանելով զայն խիճ մը, բուլմա մը, եայլն, եայլն: Նախապատմական այդ շրջանին սակայն գերուկ նահապետէ, ստրուկ համարուող իր ծառան է որ կը յառաջանայ սակայն: Ան է որ հերկած է հողը, շինած է խրճիթը, պատրաստած է կահերը: Աշխատող բազուկը հոն բացորոշ կերպով կը տեսնուի, և այդ բազուկը ծառային, անարգուած այդ արարածին վրայ: Այս կերպով ուրեմն, նախնական քաղաքակրթութիւնը աշխարհ կը պարտի անարգուած ծառաներուս, եթէ ոչ բոլորը՝ գէթ մեծագոյն մասը:

Այդ աշխատող բազուկը սակայն, զերծ չէ մնացած շղթաներէ, կապանքներէ, կաշկանդումներէ և հալածանքներէ: Անոնք որքան ալ որ՝ բազմապիսի կերպով երկան եւեւէ եւե, սակայն չի կարողացան խորտակել, և դեռ չպիտի կրնան խորտակել, պարզ այն պատճառաւ որ, այդ բազուկներ կը կրեն իրենց մէջ յաւիտենական ուժը՝ որ կը յաղթէ ամէն արգելառու ոյժ: Կրնայ նախատուիլ, կրնայ հալածուիլ, բայց ոչ յաղթուիլ:

Նախապատմական շրջանէն սկսեալ մինչև մեր օրերը, աշխատաւոր մեծամասնութիւնը՝ որոնք կը կազմեն գաւառա-

գիւղեր ընդհանրապէս, հալածուած են առանձնացուած են և օտարեան ճանապարհներու մէջ շատ անգամ լքուած: Սակայն այդ առանձնացումներ, այդ հալածանքներ, այդ վերջապէս չարչարանքներ բուռն միջավայրը, որկրով մարդկային բանականութիւնը՝ ընդունակ ըրած է անհատը բնութիւնը իւրացնել տալու: Այս ալ գաւառի մթնոլորտին մէջ, և ոչ թէ ապարանքներու և պալատներու: Ճշմարիտ է որ տանջարաններէ կը ծնին հանճարները և հանճարներն ալ ինքնին տանջարան մ'են: Հաղուադէպ են և թիւերը խիստ նուազ, քաղաքակրթութեան ազդակ մը, զօրաւոր մը հանդիսացող գիւտի մը մեծատաղանդներէ գտնուած ըլլալը: Բոլոր պատկառելի գիւտերու հեղինակները գաւառացի են, և գաւառացի ինչպէս՝ քաղաքակրթութեան առաջնորդները:

Ներկայիս ճարտարագործութիւնները որոնք կը զարգանան փութանակի աճումով մը, կը պարտին իրենց զարգացումը գաւառացիին: Գաւառացի բաղուկին կը պարտինք ճարտարարուեստներու ծաղկումը եւս: Գործատուններէն ներս աշխատող բազմաթիւ գործաւորներ, որոնք ստուարն են քաղաքակրթութեան տարածման, մեծամասնութեամբ գաւառացիներէ կը բաղկանան: Մամուլը գաւառացիներով կը բարձրանայ: Չ'կայ, չ'կայ երբէք քաղաքակրթութեան տարածման ստար հանդիսացող ոևէ ազդակ, որու մէջ գաւառը և գաւառացին չ'ունենայ իր ընդարձակ բաժինը:

Պատմութիւնը մեր բոլոր բաժններուն վկայ է: Ակնարկ մը դարձնելը բաւական է անցեալին վրայ: Պետութիւններ գիտցած ըլլալով գաւառացիին ունեցած թէ կրթական գործերուն, և թէ արուեստներու, գեղարուեստներու մասին, ինչպէս նաև զինուորական քաջամարտիկ ռազմագիտութեան նկատմամբ ցուցուցած մեծ տաղանդը, չարունակ աշխատած են իրենց կարևորագոյն գործերը յանձնել անոնց անաչառութեան: Նոյն բանը կը տեսնենք մենք՝ և հայ պատմութեան մէջ:

Հոն ուր գաւառացին չէ ոյժ տուած, հոն կենդանութիւն չէ եղած: Մի թէ բոլոր պետութիւններուն զինուորական բանակները չեն բաղկանար գաւառացի տարրերէ: Այս, զինուորական, աշխատաւորական, կրթական, քաղաքական, ամէն բանակներու մէջ վերջապէս իր գործօն դերը ունի և ունեցած է գաւառացին:

Այս բոլորին փոխան, մայրաքաղաքներու մէջ որջացած տիրապետող դասակարգին — պետական ու քաղաքական, դրամատիրական ու ընչաւոր արիւնաքամ անձնաւորութիւններու կողմէ՝ ջանք և խնամք, և ամարդի ամէն զոհողութիւններ չեն խնայուած՝ իրենցմէ փարախներով հեռու ապրող գաւառացին բնական ամէն իրաւունքներէ սեպհականազրկելու: Այս մասին անցեալին ու պատմութեան դիմելու պէտքը չ'ունինք, ներկան մեր աչքին առջև է: Գաւառացին իրաւազրկուած բոլորքերու մամուլ մէջ, գաւառացին դատարաններու առջև դեռ ստրուկ, կեդրոնը համր անոր համար վերջապէս գաւառացիին ձայնը անարձագանք և «ձայն բարբառոյ յանապատի»:

Գաւառացին հպարտ է իր անցեալովը: Հոն ուր իրեն համար ասպարէզը չէ պակսած, ան ցոյց տուած է իր գործունէութիւնը քաղաքակրթութեան բոլոր ճիւղերուն մէջ, և երկիրը շէնցուցած ու պայծառացուցած: Հոն, ուր պետութիւններ ջանացած են ալ թողուլ իրենց գաւառները թէ տնտեսապէս և թէ քաղաքականապէս, այդ պետութիւններ զօրացած են և իրենց ժողովուրդն ալ հանգստացած: Սակայն Թուրքիայի նման երկիրներ, որոնք ալ չեն դարձուցած իրենց գաւառներու վիճակին և ա-

նոր կարօտութիւններու պատճառ հողն ու խնամքը զլացած, անոնք լքուած են և չորնալու [illegible] դատապարտուած։

Քաղաքակրթութեան առաջին՝ ասիկա այդ երկիրներ և պետութիւններ պատասխանատու են։ Գիւղացին կ'ուզէ գործել, և սակայն գործունէութեան դաշտը չի կայ։ Աշխարհագիրները կը բացակայ[ին]։ Հողը կը զլացուի կեդրոններէն։ Ձեր թողուք որ բնական հարստութիւնները հանուին հոյս հողերէ, ճարտարարուեստական ձեռնարկներ օրեր և ժամանակներ առաջ հիմնուին։ Թող կատարուի որ միևնոյն Հողին ու Հայրենիքին զաւակները զիրար յօշոտեն՝ անոնց մէջ ատելութեան սերմերը ցանելով։ Քաղաքակրթութիւնը այդ երկիրներուն մէջ կողոպուտի կը յառաջանայ, և զարգացումը դադրած, ժողովուրդը չի թողուր որ յառաջդիմէ ամէն ճշմարիտ քան՝ տխուր ցուցնելով անոր։ Նախապաշարումներ ընդարձակ տեղեր կը գրաւեն անոնց մաքերուն մէջ, և փոխանակ բնական ամէն գիւղական ու քաղաքային գործեր, որոնցմէ միայն կրնայ առաջ գալ իրական երջանկութիւնը, մարդավայել կեանքը, մթագնուած և վատ կ'երևան։

Այս ամենին պատասխանատուն կը կրկնեմ՝ դարձեալ պետութիւններ են։ Անոնց վրայ պարտք կը ծանրանայ միջոցներ հայթայթել գիւղացիին համար, զայն զօրացնելու։ Անոնց վրայ դարձեալ պարտք կ'իյնայ գաւառը չի սեպհականազրկելու՝ բնութենէն իրեն պարգեւուած բարիքներէն ու կեանքի երջանկութիւններէն։

Արդ, գաւառը պէտք է նախ վերածնի որպէսզի վերածնի և պետութիւնը։ Գիւղացին պէտք է նախ երջանկանայ, որպէսզի երջանկանայ և ամբողջ պետութիւնը...։

Ամասիա

ԱՐՄԷՆ ՄԱՆԿՈՒՆԻ

# ՄԵՐ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԸՆՏՐԵԼԻՆԵՐԸ

Ամէն քաղաքակիրթ երկիրներու մէջ քաղաքական ազատութիւններ իրենց գոյութեան համար ու ծրագրային սկզբունքներուն վրայ յենուած բնորոշ ու դիւանագիտական պայքարներ կը մղեն։ Բնական է, թուրքական քաղաքութիւն չի ունի կազմեր և չէ ալ կազմած, որովհետև իր մէջ գոյութիւն ունեցող կուսակցութիւնները իրենց հակացութեան չափերուն և ձգտումներուն համաձայն սկսած են բնորոշել գործերու նախապատրաստական պայքարները միշտ մամուլով և բեմով։ Սակայն ինչ որ ցաւալի ու միանգամայն յուսահատական է, սկսուած պայքարը իր սկզբնական քայլերուն մէջ իսկ գաղափարային ըլլալէ հեռի, ուղղակի անպատուաբեր է։ Ընդդիմադիր ուժեր միմեանց չհանդուրժելու համար ամէն միջոցներու, զրպարտութիւններու ու նոյնիսկ հայհոյութիւններու կը դիմեն, ինչ որ սահմանադրական երկրի մը համար պատիւ չի բերեր։ Մանաւանդ գաւառին կուսակցական մամուլներէն շատեր խիստ անպատկառ ու գռեհկութեան անվայել լեզու մը կը գործածեն իրենց ընդդիմադիրներուն։ Կարծես Իթթիհատ ու Իթիլաֆ դարաւոր թշնամիներ եղած ըլլային իրարու, մինչդեռ դեռ երէկ միևնոյն խորհուրդն ու զգացումները կը տածէին միասնաբար, միևնոյն չափերն հետապնդելով...։

Ո՛չ նուազ մեր զարգացումին ու նոյն, ի՛ն թերահաւատութեան պատճառ կը

դառնան այն զրոյցները թէ՝ կառավա-վարական պաշտօնեաներն ա. ամէն կողմով իրենց եղած ազդու հրահանգներուն հլու, սակայն ի՛ հաշիւ Իթթիհատին պիտի աշխատին եղեր կամ նոյնիսկ աշխատելու ալ սկսած են եղեր. մենք առանց այս կամ այն կուսակցութեան դրօշակակիր ըլլալու, եթէ կառավարութիւնը խուսափի իր չէզոքի՝ հանգամանքէն դուրս գալով այս կամ այն կուսակցութեանց հաշւոյն սիրու՝ աշխատու՝ հակառանձնագրական նկատելով կը բողոքենք ու միենոյն ատեն յանուն ժողովրդեան խղճին ազատութեան կը դատապարտենք այդ քայլը, որ պաշտօնէութիւնը դէպի միակողմանիութիւն կ՚առաջնորդէ, զանոնք իրենց բուն խորհրդակիցներն ու դաւանանքին հակառակ քայլեր առնելու ստիպողականութեան տակ դնելով: Բոլոր երկիրներու մէջ կառավարութիւնները իրենց չէզոքի հանգամանքը պահած են, միմիայն ընտրական պայքարներու առթիւ ծագելիք անպատեհութեանց առթիւ վերջին հակազդ մը դերը ստանձնելով: Կը յուսանք ու կը հաւատանք թէ նոյն նոյն բարձրութեան վրայ կը մնայ հոս ևս, ժողովուրդը իր խղճին վրայ ազատ թողելով:

Այս պարագային վրայ կ՚ուզենք ծանրանալ, յետոյ կու գամ հարցնել թէ ո՛րն, որո՞նք են Ամասիա սանճագի յարմարագոյն ընտրելիները:

Երէկ. ժողովի նախորդ շրջանին Ամասիան Իթթիհատի թեկնածութիւններուն յանձնելով Ծուսի, Արիֆ Յագըր, և Խամալիկ Համդը փաշա էֆէնտիները ընտրած էր իր ներկայացուցիչ: Երեք ու կէս տարուան փորձառութիւնը ամէն անկեղծ հայրենասէրներն այն եզրակացութեան բերաւ թէ անոնցմէ առաջինը լաւ անտարբերութեամբ մը իր վրայ դրուած յոյսերը չիրականացուց, իսկ վերջին երկուքը, ժամանակաւորապէս երբորդը, իրենց ջանքերովն ու ցոյց տըւած կարողութեամբը մինչև այսօր ներկայացնել փորձուած թեկնածուներու մէջ ամենէն յարմարագոյններն են. հետևաբար անոնցմէ Ամասիան բաժնուելու ոևէ պատճառ չունի: Այս երկուքէն վերջ պիտի ցոյց տամ երրորդ մըն ալ որ իսկական պատգամաւորէ մը պահանջուած բոլոր առաւելութիւններն ու բարեմասնութիւնները մարմնացած են իր վրայ: Ոսկի թուրքերէն լեզուի հմտութիւն, օսմանական պաշար, ընկերական իրական յատկութիւն, քաղաքական հարցերու գիտակցութիւն, եւրոպական օրէնսգիտութիւն, անհատական ձեռներէցութիւն, օգտակար ըլլալու ջանք, դիւանագիտական ու կենսագրական նրբութիւններ, յեղափոխական անձնուիրութիւն, գրական և կրթական հասկացողութիւն և վերջապէս ճշմարիտ ու անկեղծ հայրենասիրութիւն, արդարասիրութիւն ու ազատասիրութիւն: Դա՛, ԲՐՕՖ. ԿԱՐԱՊԵՏ ԹՈՒՄԱՅԵԱՆՆ է, որ վերոնշանակեալ բոլոր առաւելութիւնները կը մարմնացնէ իր վրայ և որ ժողովրդային յայտնուած համակրանքներուն տեղի տալով իր հայրենիքին ծառայելու համար, մնացեալ Օսմ. Դեսպանատան միջոցաւ իր թեկնածութիւնը դրած է, թէև անկէ առաջ ալ՝ արդէն համակիր ժողովուրդը հանրագրութիւնով մը իր թեկնածուն ներկայացուցած էր զայն:

Ուրախութեամբ կիմանանք թէ հայ և Թուրք քաղաքական կուսակցութիւններէն մէկ քանիները, անոր բացարձակ ուրոյն ձիրքերն ընդունելով և զայն ընտրելը հայրենասիրական աւագ պարտք մը կատարել նկատելով իրենց թեկնածուներու նոյնուն ցանկին մէջ դրած են, կը յուսանք թէ միւսներն ալ՝ անսալով իրենց խղճին ու հայրենիքին ձայնին կը փութան օգտուիլ անոր կարողութիւններէն: Բայց մեր անկեղծ փա-

փաքը որ ուղղակի հայրենիքի շահը կը պահանջէ. նախորդ շրջանի նման կուսակցամոլական էնթրիկներով չի դաւաճանեն հայրենիքին մեր հայրենակիցներէն ոմանք։ Մենք երբ Բրոֆ. Թումայեանը կը յանձնարարենք բնաւ ազգայնական ձգտումներէ չէ. գիտենք ու լաւ գիտենք որ հայը միշտ փոքրամասնութիւն պիտի ներկայացնէ երեն. Ժողովի մէջ, մէկ Թիւի առաւելութիւնը ազգային ծով ցաւերուն սատարելուն երբեք չա՛ղդեր, նաեւ Թումանեանի նկարագիրը ճանչնալնուս երբեք չենք խորհեր որ անիրաւի եղած հայ դատ մը պաշտպանէ հայ ըլլալուն համար, ո՛չ երբեք, մենք այս տեսակէտը մեր մօքէն իսկ չենք անցըներ մեր տեսակէտը յաւ. մէպուս տալն է, և եր խորհինք թէ անիկէ յարմարագոյնն մէկ նաեւ իսկ չէն կրնար ցոյց-տալ։

Ուստի ուղղակի հայրենիքի շահերէն առաջնորդուած կը հրաւիրենք բոլոր անկեղծ հայրենասէրներն որ, առանց այս կամ այն կողմէ եղած ուէ թելադրանքներու անսալու, ուղղակի իրենց խղճին հետեւելով իրենց քուէները կեդրոնացնեն Բրոֆ. Թումանեանի և վերանշանակեալ երկու մէպուսաններու վրայ. այս է հայրենիքի շահը...։

Գ. ԱԹԷՇԵԱՆ

# ԳԱՒԱՌԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Էրպաաէն կը գրէ մեզի Թղթակից մը։

Դեղագործ Յ. Պօյաճեան գիր մը ուղղելով տեղւոյն Թաղականութեան Ազգ. վարժարանի որուն մէջ բանախօսութեան մը Թոյլտուութիւնը կը խնդրէ. Թաղականութիւնը չ'արտօներ առարկելով թէ մինչեւ հիմայ այդպիսի բան մը եղած չէ եւ ասկէ վերջն ալ չենք թողուր որ ըլլայ.....!!!

Կը ցաւինք որ Թաղական աղաներուն մէջ կուսակցական քուէներով ընտրուած աղքատամիտ( ) ռանչպարներ ալ կան։

***

Դարձեալ նոյն Թաղականութիւնը դպրոցական հոգաբարձութիւն մը կը կազմէ առանց խղճի և արդարութեան վիճակը նկատի առնելու նախակրթարանի շրջանն իսկ չաւարտող չուկայի պախալը անդամ կ'ընտրուի մինչ անդին համալսարանէ վկայեալը լուր անդամ չունի։ Լոկ իրենց համախոհները ընտրած ըլլալ և հրաշակերտներու գործ յանձնել չուզելու կուսակցամոլական ձգտումներէ մղուած, բայց մօտ է վախճանը այս ամենուն...,

***

Դարձեալ ուրիշ Թղթակից մը Էրպաաէն կը գրէ.— Սօխու տաշ գիւղի բնակիչները ամսոյս 9ին Էրպաա'ի պազարին չ'կրցին գալ չարագործի մը պատճառաւ։ Յիշեալ գիւղի դրացիներէն, Օսման գիւղացի Թախսին օղլ. Թիւրք անունով Զէրքէզը, Սօխու տաշ գիւղէն անիրաւաբար հող յափշտակելով յաջողած է տուն մը շինել հոն. գիւղացիներն ալ այս անիրաւութեան դէմ Թօգաթ դատ բանալով յաջողած են իրաւունք շահիլ, և տունը քանդել. Թիւրք՝ բարկանալով Սօխու տաշի բնակիչներուն դէմ, ամսոյս 8ին Զօրեքշաբթի օրը, մաւզերով առնելով ճամբան կը փակէ և չ'թողլար որ Հէրէք գան խեղճ գիւղացիները և մարթինը ցոյց տալով կ'ըսէ. աս կառավարութիւնը, աս օրէնքը. ամէն ինչ ասորմէ կախում ունի։ Դուք բան գործ չունիք գնացէք կառավարութեան։ Խեղճերը ճարահատ և յուսահատ ետ կը դառնան և կը հրաժարին Հէրէկ գալու դիտաւորութենէն։ Այս պարագան Թօգաթի վալի Միւթէսարրըֆին ուշադրութեան կը յանձնենք։

## ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

# ԹԵՐԹԻՍ ԱՐՏՕՆԱՏԷՐԸ ԴԱՏԻ ՀՐԱՒԻՐՈՒԱԾ

### ՄԱՐՏ 18ԻՆ ԿԻՐԱԿԻ ՕՐԸ

Թուրք ծանօթ ու ազատամիտ գրագէտ Նեկէճ Վ.Էլէծսիլ պէյի Եգիպտոս հրատարակած «Էլմուգատտէմ» թերթին մէջի Թեսսալիա յօդուածը, զոր «Բիւզանդիոն»ի կողմէ հայերէնի թարգմանուած էր, մենք ալ գնահատելով անոր անկեղծ ու ազատաշունչ բովանդակութիւնը թերթիս 7 և 8րդ թիւերուն ֆէօյլթօններուն բաժինին մէջ անկէ թարգմանաբար հրատարակած էինք, միամտելով թէ իրական ծառայութիւն մը մատուցած կ'ըլլանք այդ հայրենասիրական ոգւով գրուած գրութիւնը ծանօթացնելով գաւառի ժողովրդեան ալ։ Սակայն այս անգամ եկած կոչնագրէ մը կ'իմանանք թէ այդ յօդուածներուն հրատարակութեանը համար, անշուշտ ընդհ. դատախազին կողմէ իբր վարձատրութիւն դատ բացուած է թերթիս արտօնատէրին դէմ, Մարտ 18ին կիրակի օր։

Չի մոռնանք յիշելու թէ մեզմէ շաբաթներ վերջը նոյն յօդուածը պատերազմական առանձին ազդեցութեան տակ գտնուած Պոլսոյ մէջ հրատարակուող «Բաւնիժամ»ն ալ հրատարակեց։ Բայց անոնց դէմ ոևէ ձեռնարկ չեղաւ։ Ինչ եւ իցէ, այսքանը մեր ընթերցողներուն իբր տեղեկութիւն հաղորդելէ յետոյ, ժամանակին արդիւնքը ընդարձակօրէն կ'իմացնենք մեր [illegible]թիւններովը։

---

**ԺՂՄԱՆՈՒՄ**

Ամսոյս 27ին Սեբաստիոյ Վսեմ. Կուսակալը տեղս ժամանեց։ Եղած մասնաւոր հրաւէրներու վրայ քաղաքիս կրօնական և կուսակցական ներկայացուցիչները և եշրաֆ դասակարգը մինչև «Հէլվաճի բունարի» կոչուած տեղը փութացած էին դիմաւորելու և բարի գալուստ մաղթելու։ Փոխադարձ սիրալիր ու յարգալիր ընդունելութիւններ եղան։ Մենք ալ բարեգալուստնիս մաղթելով մեր յարգանքները կը մատուցանենք։

**ԼՍԱՐԱՆ**

Մարզուանի Ազգ. Վարժարանի Անգլ. լեզուի ուսուցիչ և Ս. Դ. Հնչակեան ծանօթ դէմքերէն Տէր Աբգար Պարտամեան որ գործով մը քաղաքս այցելած էր, ամսոյս 26ին կիրակի օրը Ս. Դ. Հնչակեաններու կլուպին մէջ «Եւրոպայի մեծ ոյժերու հաւասարակշռութիւնը» նիւթին վրայ գեղեցիկ բանախօսութիւն մ'րրաւ։ Պատմականօրէն բացատրեց թէ ներկայ եւրոպական դաշնակցութիւնները ոյժերը հաւասարակշռելու և իրենց շահերը պաշտպանելու համար, ի՞նչ միջոցներու դիմած են և ի՞նչ եղած է Անգլիոյ դերը այս ամենուն մէջ. յետոյ անդրադառնալով մեր երկրին շուրջ, անոր փրկութիւնը Անգլիոյ և Ֆրանսայի հետ համաձայնելուն մէջ գտաւ, ո՛չ թէ անոնց նման Գերմանիոյ հետ։

Գոհ տպաւորութիւն մը թողելով իր շուրջը Աբգար էֆ. մեկնեցաւ 27ին։

**ԱՋԴԱՑԻՆ**

Ս. Ներսէսեան վարժարանի դաստիարակ Յակոբ էֆ. Մեսրոպեան, իր երկարատև հիւանդութեանը պատճառաւ հրաժարեցուցուելով՝ անոր տեղ Նորընտիր թաղ. խորհրդոյ ատենադպիրը՝ Մկրտիչ էֆ. Զաքրեան դաստիարակութեան պաշ-

տօնին համար վարձուեցաւ։

Նոյնպէս Ս. Յակոբ վարժարանի դաստիարակին Զօրում մեկնելուն պատճառաւ Պր. Մազասճեան անոր տեղ վարձուեցաւ։

Երկուքին ալ պաշտօնները շնորհաւորելով բարի յաջողութիւններ կը մաղթենք։

ԵՐԵԿՈՅԹ

Ս. Դ. Հնչակեան Թատերական յանձնախումբը իր համակիրներուն և ընկերներուն շրջանակին մէջ երեկոյթ մը տուաւ, ուր ոմանցմէ օգտակար թելադրութիւններ եղան դէպի գաւառային թատրոնը բռնելիք դիրքի մասին։ Գեղեցիկ ժամանց մըն էր։

## ՄԵԾ ԻՆՔՆԱԳՈՎՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՍՈՒՏԸ

ՄՈՒՐՃԻ ԹԻՒ 40ԻՆ ՄԷՋ ԳՐՈՒԱԾ Է.—

«ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ.— Ամասիայէն կը գրեն մեզ.— «Յունուար 29ի Կիրակի օրը տեղւոյս Ս. Դ. Հնչ. ակումբին մէջ խօսեցաւ՝ Վերակազմեալ Հնչակեան գործիչը՝ ի ներկայութեան խուռն բազմութեան։ Ատենախօսութենէ վերջ թեր ու դէմ կարծիքներու փոխանակութիւններ եղան և ուրախութեամբ տեսանք որ Վերակազմեալ Հնչակեանութեան ազգայնական գաղափարը և ուղղութիւնը արդէն իսկ մտքերու վրայ ազդած է խորապէս։ Բազմաթիւ ունկնդիրներ. փափաք յայտնեցին անմիջապէս հաւաքուիլ Վեր. Հնչակեան դրօշին տակ, զոր ատենէ մը վեր թողեր էին, և զոր սակայն իրենց հոգիին բոլոր թափովը դադրած չէին յարգելէ։»

Այս թղթակցութիւնը կը խորհինք ու նոյնիսկ կը հաւատանք թէ նոյնինքն Վերակազմեալ գործիչը գրած է ինքզինքին ռէքլամ մը ըրած ըլլալու կատարեալ մեծամտութեամբ. իսկ եթէ ինք չէ ըրած ու ուրիշ մէկն է, բացարձակ սուտ մը կամ կաշառուած մըն է. որովհետև անոր մէջ իրականութեան բոլորովին հակառակ արտայայտութիւն պատկերացուած է։ Ատենախօսութենէն վերջ ոչ թէ թեր ու դէմ կարծիքներու փոխանակութիւններ չեղան և ոչ մէկ անհատ ալ իրեն դիմեց որ Վերակազմեալներու դրօշին տակ մտնէ. եթէ այդպիսի դիմում եղած է ինչո՞ւ այդ պատուական գործիչը հոս մասնաճիւղ մը չի կազմեց, մինչ իր կէս նպատակին ու մտադրութիւնը այդ մարդորսութիւնը չէ՞ր։ Ո՛չ պարոնե՛ր, ո՛չ, Ամասիոյ մէջ ազգայնական ծրագրի մը հետևելու չափ միամիտներ չեն մնացած. այդ կերպ սուտ զրպարտութիւններով ինքնախաբէութեան մը մատնուիք։ Սակայն ինչո՞ւ այս չնդալից յայտնութիւնները...։

## ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

Ինչպէ՛ս մեր նախկին թիւին մէջ «մեր յարմարագոյն թեկնածուները» յօդուածէն կ'երևի Պրօֆ. Կ. Թումանեան Լօնտոնի Օսմ. Դեսպանին միջոցաւ իր թեկնածութիւնը դրած է Ամասիա-Մարզուանի համար, իր կարողութիւններու մասին ոևէ բան հոս ևս ըսել աւելորդ կը սեպենք, քանի որ վերանշանակեալ յօդուածին մէջ մասամբ ծանօթացուցուած է։

Կը մնայ մեզի անոր կարողութիւններէն օգտուիլ։

Վիճակիս նախորդ երեսփոխան ԻՍՄԱՅԻԼ ՀԱԳԳԻ փաշա ևս դրած է իր թեկնածութիւնը կրկին այս վիճակին համար։

Իթթիհատականներն ու Իթիլաֆականները իրենց վերջնական թեկնածուները դեռ չեն ներկայացուցած պաշտօնապէս։

Արտօնատէր՝ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱԳԻԳԵԱՆ
Խմբագրապետ՝ ՄԻՆԱՍ ԻՓԷՔՃԵԱՆ
Տպ. ՅՈՎՆԱՆԵԱՆ ԵՒ ԽԱՉՏՐԵԱՆ

حکمت و ماهیتی ، مشارالیهك اوتوز قرق سنه
لك غیرت وماهیه‌سنی تعین و تقدیر ایده‌جك
عرفان و اذعاندن محروم ظن ایدیورسه‌کز
تأسف ایدرم عجبا اسماعیل حقی پاشاده عین کرا-
متدر . مطبوعات بورجدر ، بیان مطالعه ایتمك
حده دکلدرمی دیملی ایدی ملت مبعوثلری اوته
کینك بریکنك النده الت ایدلمك استنیلیور . بتون
منورلری حال انزوایه دعوت ایدیلورسه صکره
نه اولور محمد فیضی افندی امین اولکز اماسیه
لواسی محیطنده شو حرکتکزی تقدیر ایدن ، بو
معرفتکزی دور حریته لایق کورن یوقدر .
جهلاری کوزل انتخاب ایتمشسکز فقط محل صر-
فی بوله‌مامشسکز وینه امین اولکزکه وکیل عمو-
میه‌سی کبی کوروننك استدیککز افکار عمومیه-
سیده ، اسماعیل حقی پاشانك بعون‌الله تعالی مادام
الحیاة اماسیه مبعوثی اوله‌جغیده نتیجهٔ انتخابده
اکلایه‌جقسکز . ...

§ غزته‌مز صاحب امتیازی حایقازون افندی
طبیبانك قیصری مبعوثلغنه نامزدلکنی وضع
ایلمسی ایچون کرك هنچاقیان جمعیتی مرکز عمو-
میه‌سی و کرك قیصری اهالیسی طرفندن وقوع
بولان تکالیفه قارشو مومی‌الیه وظیفهٔ مذکوره‌نك
اقتدارینك فوقنده بولندیغنی درمیانله قبولنده
معذور اولدیغنی جواباً بیلدیرمشدر .

شئونات «مارت ٢٦»

والئ عالئ ولایت علاءالدین بك افندی حضر-
تلری شهرمزه تشریف بیوره‌رق فرداسی کون
ملحقاته عزیمت بیورمشلردر .

دونکی کون حریت و ائتلاف فرقه‌سی اعضا-
سندن و سیواس مبعوث نامزدی فاضل محترم
عبدالله ضیاءالدین افندیله بالذات درسعاملرندن
خالدیکتا ، شرف‌الدین و محمود افندیلر شهریمزی
تشریف بیورمشلردر . آرامزده بولنه‌جقلری
قیمتدار ساعتلرنده شایان استفاده موعظه‌لریله
اهالئ کرامزك ارشادات مشروطیت‌پرورانه‌لرینی
تأمین ایده‌جکلرینی امید ایلرز

* * *

## عجبا مشروطیت لغو ایدلدی ؟

## بزممی خبریمز یوق ؟

بو سرلوحه‌یی اتخاذنده‌کی مجبوریتمز

صوك ساعتده الدیغمز معلومات موثوقه‌یه نظراً
حوادث قسممزده تشریفلرینی اخبار ایلدیکمز
علماء بنامدن عبدالله ضیاءالدین افندی حضرتلرینك
حریت و ائتلاف قلوبنده ویرمك ایسته‌دکاری بر
موعظهٔ دینیه‌یی مقام متصرفیت طرفندن رسماً منع
ایدلمسندن ایلری کلیور .

حریت کلام مشروطیتك یکانه ملته تأمین ایتد-
یکی فوائدك اك مهملرندن ایکن بوکا سدمانعت
اظهاری (لا سمح الله) معلوم اولمیان بر سببدن
طولایی برات ملت بولنان مشروطیتك لغو ایدلد-
یکنی اشراب ایدیورز حکومتدن صوریورز .
حقیقةً بویله بر شی وارمیدر ؟

اڭ یولده مقدماته تشبثله حاصل اوله‌جغنده شبهه یوغیسه‌ده یاپیلان قانونلر و نظاملر مقدمات نوعندن اولمیوب اوروپاده الڭ متمدن ملتلرڭ نیجه سنه‌لردنبری علوم و معارف قوتیله واصل اولدقلری درجه‌یه کوره براصول اداره اولدیغی حالده بو اصولی بردنبره بزم مملکتده اجرا ایتمك ممکن اولمیه‌رق نهایت اکثریسنڭ شمدیکی کبی اجراسز قالمسی و بر طاقمڭ عکس مقصدی منتج اولمسی طبیعیدر .

پادشاهمز افندیمز حضرتلرینڭ تجدید اساس دولت واعمار ملك ومملکت نیات خیریه‌سیله تأسیس بیوردقلری قانون اساسینڭ یوز سکزنجی ماده‌سنده ولایاتڭ اصول اداره‌سی توسیع مأذونیت وتفریق وظائف قاعده‌سی اوزرینه مؤسس اولمسی حقنده سبق ایدن وعد عالی دخی ولایاتڭ هر طرفنده یوللر و شمندوفرلر و تلغرافلر و سائر وسائط لازمه وخلقجه استعداد کامل خصوصیله اوروپانڭ احوال منتظمه‌سی درجه‌سنه یتشنجه‌یه قدر مملکتلرڭ ایجابات موقعیه‌سنه کوره اداره‌سی محللرینه براقلمق ملاحظهٔ صائبه‌سنه مستند اولدیغی حالده شمدی بونڭ تماميله عکسی و مخالفی اوله‌رق ولایتلرجه کافهٔ مفردات امورڭ مرکز دولته جلب و جمعی طوغری اولمیه‌جغی مستغنی عرض و بیاندر .

یوقاریده بیان اولندیغی 'وزره ولایتلرجه اولان احتیاجات یکدیکرینه مقیس اولمدیغی جهتله عمومی حقنده اولان نظریاتمه بودرجه‌دن زیاده بیان رأی وافکاره اقتدار و معلومات عاجزانهم مساعد اولمیوب فقط شو موقعده ایکی سنه‌یه قریب مدت کوریلان احوالدن حاصل اولان وبو ولایته مخصوص بولنان معلوماته کوره مشکلات موجوده‌نڭ منعیله ولایتڭ حسن اداره‌سی ایکی شقدن برینڭ اختیارینه موقوف اوله‌رق بونڭ بریسی یوقاریده ذکر اولندیغی وجهله امور عدلیه ومالیه وملکیه حقنده عمومی ولایتغیر حکمنده اولان قوانیندن ماعدا اصول و نظامات موقع و محللرینڭ ایجابات و احتیاجاتنه کوره نصل و نه وجهله لازم کلیرسه اقتضالری قرارلاشدیروب لایحه‌لری تقدیم قلنمق اوزره بو رایه حواله‌سی و دیکری نشر اولنان قوانین و نظامنده بیان بیورلدیغی اوزره ولایاتڭ کافهٔ اموری مرکزده اداره و رؤیتله هر اداره درسعادتده مرجعی اولان دوائر عالیه طرفندن مسئول اولمق اصولی ترجیح بیورلدیغی حالده ولایتڭ مسئولیتنه محل قالمیه‌جغندن بورانسڭ امر وسمی ایله تعیین بیورلمسی ایجاب ایدر . ٧ مایس ٩٦

*
* *

اوراق وارده

مرزیفونلی محمد فیضی افندی‌یه

صورت مخصوصه‌ده طاغتدیردیغکز ٣ نومرو ١٩ شباط سنه ٣٢٧ تاریخلو قزیل ایرمق غزته‌سیله نشر اولنان مکتوبکزی اوقودم قیصه‌جه بر جواب ویرلمسی لوازم قدر شناسیدن عد ایلدم

اسماعیل حقی پاشا حضرتلرینڭ پاك اولان وجدانی میدانده حیت فریادلری اول و آخر قولاقلریمزده‌در وطنداشلریکزی مکتوبکزڭ

ازجمله قداسترو و استاتستیق اصوللری ابتدا
مملکتك املاك و اراضیسی مهندسلر معرفتیله
اولچیلوب و خریطه‌لری یاپیلوب هرکسك حقوق
تصرفیه‌سی و تصرفنده بولنان یرلرك قیمت
صحیحه‌سی تعیین ایتمك و نفوسك قاعده اوزره
وقوعاتی مضبوط اولمق و هر کویده بر اختیار
مجلس و هر ناحیه‌ده ناحیه مجلسلری بولنمق و
افراد اهالی دخی بونلرك قواعد و نظاماتی
هیچ اولمازسه بر مدت اولسون جبری اوله‌رق
اجرایه قابل و مستعد اولمق مثللو شیلره محتاج
ایکن بونلرك هیچ بریسی یاپلمیان و بر تك
مهندس اولمیان و حالا مقدار نفوسی بیلنمیان
بر مملکتده شهری یوز اللی غروش معاشلی ..
کاتب ایله قداسترو و استاتستیق نظاماتنك اجرا
اولنه‌جغی ظن و اعتقاد ایله ایشه باشلانیلور ایسه
مقصدك وجوده کله‌مسی طبیعیدر و کذلك اصول
محاکمه قانونلری حکمنجه دعاوی حقوقیه ایچون
معین اولان بر طاقم معاملات رسمیه‌نك اجراسی
ایچون رفته رفته اهلیتلی مامورلر یتیشدیرمکله
برابر بر طرفدن دخی خلقك شو اصوله کسب
الفت و قابلیت ایده‌جکی زمانه قدر دوچار اوله‌
جغی مشکلات امور طبیعیه و ضروریه‌دن عد
اولنه‌رق بونلرك مادةً وقوعه کله‌جك مضرتلرك
اهمیتی اولمسه بیله امنیت مملکتی اخلال ایتمسندن
طولایی مسئولیتی تماميله مأمورین حکومته عائد
اولان اصحاب جرم و جنایاتك اخذ و حبسنده
و محاکمه‌سنده و تخلیهٔ سبیلی خصوصنده مأمورین
حکومتك مدخلی شویله طورسون خبری بیله او

لمامسی التزام ایدلمك و صکره آنلرك سؤاحوال
ندن ظهور ایده‌جك مسئولیتی حکومت مامورلر
ینه تحمیل ایدلمك نقدر یاکلش ایسه امور ضابطه
نك قوماندانی و حرکات سائره‌سی بر درجه‌یه
قدر حربیه نظارت جلیله‌سنه حواله ایله اوراندن
الدره اولنمق و والینك رای و انهاسی آلای بکنك
انهاسیله تصدیق ایدلمك دخی او درجه غریب و
عجیبدر . واقعا شو یاپیلان قانونلرك حکمنه
تطبیقاً آوروپاده خصوصیله فرانسه‌ده محاکمك
وظائفی و کافهٔ امور اجرائیه‌سی بتون بتون
آیریلوب بر صورت مستقله‌یه قونلمش و پولیس
و ژاندارمه وظائفی دخی حکومت سیاسیه‌دن
تفریق ایدلمش ایسه‌ده ایالتده والی بولنانلرك وظا
ئف مأموره‌لری دخی آکا کوره تعدیل و تخصیص
اولنمسیله بر مملکتده نه‌قدر وقوعات اولسه والی و
متصرف آندن مسئول اولمیوب جنحه و جنایت
نوعندن ایسه پولیسه و دعاوی حقوقیه وجزائیه
ایسه محاکمه و اموال دولتك تحصیلاتنه متعلق ایسه
مالیه مأمورلرینك اداره‌سنده بولنان تحصیلدارلره
عائد اوله‌رق آنلرك دخی هربری مرکز دولتده
مرجعلرینه مربوط اولدیغی و تحریر املاك و
نفوس وتنظیم مملکت کبی امور ایسه دوائر بلدیه
اداره‌سنده بولندیغی جهتله والی و متصرف مقا
منده بولنان آدملرك وظیفه‌لری و ایشلری عادی
بر نظارتده و معاملات رسمیه‌ده توسطدن عبا
رتدر . اکرچه مآثر توجهات قدسیت آیات
حضرت پادشاهی ایله بزم مملکتك دخی اودرجه
بر صورت منتظمه‌یه کیرمسی آرزو اولنه‌رق بوده

مطلوب عالی اولان جهت دخی بو توصیلات اولیوب قوانین منتشره‌نك ولایتلرجه مصادف اولدیغی مشكلاتك اسباب و درجاتی حقنده‌كی معلوماتك سؤالندن عبارت اولمغله افكار قاصرهٔ عاجزانه‌مك محیط اولدیغی درجه‌ده بعض ایضاحاته ابتدار اولنور. شویله‌كه: بر خلقك و بر مملكتك اداره‌سی ایچون وضع اولنان قانونك حكمی لایتغیر اوله‌رق جمله حقنده بلا استثنا اجرا اولنمق شرط و لازم اولمغله قانونده اساس اولان شی بوراسی اولدیغی و بویله اولماز ایسه قانون دینیله‌میه‌جكی مسلمدر. اگرچه شمدی‌یه قدر نشر و اعلان بیوریلان قوانینك قانونیتی مجلس مبعوثانك قبولیله مشروط اولمسیله بونلرك هیچ بریسی شمدیلك صورت قطعیه‌ده دكلسه‌ده مادامكه آتیده قانون اوله‌جغی اعتباریله نشر و اعلان اولنمشدر.

بونلرك اجراآتندن حاصل اولان تجربه‌لره كوره تعدیل و تصحیحیله لایتغیر بر حاله قونلمسی لازم كلیر. قالدی‌كه نزد عالیده تعریفه حاجت اولمدیغی اوزره مملكتلرك و خصوصیله ممالك محروسهٔ شاهانه‌نك مشتمل اولدیغی بلاد وامصارك وبونلرده ساكن اولان اقوام متنوعه‌نك ایجاباتی و اخلاق وعاداتی بربرینه بكزمیوب مثلا بروسه و ادنه‌ده وضع و اتخاذندن استفاده اولنان بر اصولك حلب و سوریه و بغداد كبی یرلرده موجب مضرت اولدیغی و بالعكس اورالرده فائده‌لی اولان شیلرك دیكرلرنده ضرری انتاج ایلدیكی والحاصل پك چوق شیلر واردركه اجرا آتنك بر محلده عدل و دیكر محلده ظلم و غدر اولمق لازم كله‌جكی مملكتمزك تفصیل احوالنه وقوفی اولانلرك معلوم و مسلمدر. بناءً علیه قوانینك اجرا قلنه‌جق تعدیلات و تصحیحاتنده بورالری نظر اعتباره آلنه‌رق مملكتمزجه مطرداً و متساویاً اجرای احكامی قابل اولان ماده‌لر نه ایسه آنلرك بلاتغیر قانون اوله‌رق اجراسی و بونلرك خارجنده اولان یعنی هر مملكتك حالنه واهالیسنك عادات وامزجه‌سنه كوره تغیر و تخلفی ضروری و طبیعی بولنان خصوصاتك محللری احتیاجاتنه توفیقی اقتضا ایدر. یوقسه دیكر بر مملكتك و خصوصیله اوروپا كبی علوم و مدنیتی درجهٔ قصوایه واصل اولان ممالكك احتیاجاتنه موافق كلمش اولان بر قانون و نظامك حسن انتظامی هر نه قدر مسلم اولسه آنی تمامیله آلوب بزم مملكتده موقع اجرایه قویمق و آنك اقتطاف ثمراتنه چالیشمق عینیله اوروپاده یاپلمش و نقشهٔ نفیسه نسج و اعماله مخصوص بولنمش اولان ظریف بر ماكنه‌یی كتوروب نه آنی اداره‌یه مقتدر اوله‌جق عمله ونه‌ده آنك ایشلیه‌جكی محصولات سائره واسباب وادوات یوغیكن انی ایشلتمكه چالیشمق قبیلندندر مثلا قداسترو و استاتستیق و استقلال محاكم و اصول جبایت اموال و اصول ضابطهٔ مملكت خصوصلرنده و سائر احوال سیاسیه‌ده اوروپاجه متخذ اولان قواعد و نظاماتك جمله‌سی او مملكتلرك مقتضیاتنه كوره یاپلمش شیلر اوله‌رق اوروپانك بوكونكی انتظام حالی دخی بونلرك ثمراتی اولمغله بوكا دیه‌جك یوقدر. لكن شو دینیلان شیلردن

فكرلرنده شبهه و قلبلرنده راحتسزلغی موجب اولان بو كبی حالاتك دفع و رفعنه خدمت ایلیه‌جك جدی بندلر نشرینی همت ایله وطنه حقیقی خدمتلر ایلسونلر .

---

مقتبسات

١٦ شباط سنه ٣٢٧ تاریخ و ٢٢٥ نومرولی تأمینات غزته‌سندن اقتباساً .

## مدحت پاشا و ادارهٔ مملکت

شهید معالی‌خصلت مدحت پاشا مرحومك دامادی سلیمان نزهت بك طرفندن كوندرلمشدر :

بر مجمعك اخطاری اوزرینه دونكی كون مدحت افندینك بر قاچ كون اول طنین غزته‌سنده مندرج اوزون بر مقاله‌لرینی اوقودم . الیوم كتابخانه‌مدن اوزاق بولنمقلغم حسبیله بو بابده اوزون اوزادی‌یه تفصیلاته كیریشه‌میه‌جكسه‌مده ، مدحت افندینك بر چوق سوء تفسیرات و تأویلات ایله حریت و ائتلاف فرقه‌سنه اسناد ایتدیكی « عدم مركزیت » اصولنه ؛ مغفور مطلق مدحت پاشانك آتیده‌كی لایحه‌سنده توصیه اولنان اصول اداره‌دن بشقه بر شی دكلدر .

مدحت افندی بو ملكك مرضنی بحق تشخیص ایتمش اولان بر ذاتك بیاناتی كندی مسروداتنه جواب كافی عد ایدرلر صانیرم .

---

## ایكنجی لایحه [١]

مابین باشكاتبلكنه

قوانین و نظامات جدیده حقنده شرف واقع اولان سؤال عالی اوزرینه الك صكره تقدیم ایتدیكم شفره‌لی عریضهٔ عاجزانه‌مده قوانین متخذه‌نك اساساً لزوم و اصابتنه دیه‌جك اولمیوب فقط بحث و دعوا مملكتلرك و بونلرك سكنه‌سی اولان خلقك اختلاف عادات و اخلاق جهتیله نسق واحد اوزره یاپیلان قوانین و نظاماتك اكثریسی اجراسز قاله‌رق اجرا اولنه‌بیلنلرك دخی آثار فعلیه‌سی مقصدك خلافی منتج اولمسیله ظهوره كلن مشكلاتك منشأی بوراسی اولدیغی عرض ایدلمشدی . بو بابده اصابت افزای سنوح بیوریلان امر و فرمان حضرت پادشاهی منطوق جلیله توفیقاً بونلرك تعدیلاتی حقنده وارد افكار قاصرهٔ عاجزانه‌م اولان ملاحظاتی حاوی بر لایحه تنظیم و تقدیمی قرین مساعدهٔ سنیهٔ جناب تاجداری بیورلمسیله مع التشكر اشبو امر و فرمان همایون انفاذ و اجراسنه مسارعت متحتم ذمت عبودیت اولوب آنجق آز بر مدت ایچون وضع و اعلان بیوریلان قوانین و نظامات و تعلیماتك تعدد و تنوعی جهتیله هر برینك حاوی اولدیغی مواد مختلفه‌یی نه تدقیق و موازنه‌یه و نه ده احاطه و اداره‌یه قدرت فكریه‌م مساعد اولمدیغی كبی

---

[١] اشبو لایحه « مدحت پاشانك حیات سیاسیه‌سی » نامنده‌كی اثرك ٣٦٣ نومرولی صحیفه‌سنده مندرجدر .

نام مستعار اولمیوب محررك حقیقی اسمی اولوب الیوم قاهره‌ده منتشر (المقدم) جریدهٔ فریده‌سنك محررلرندن بولندیغی بتون ارباب قلمجه معلومدر. دور حمیدیده استانبول معارف مجلس عمومیسی اعضاسندن ایکن سیواسه نفی ایدیله‌رك مشروطیته قدر اوره‌ده قالمش و بتون سیواس اهالیسنك ازجمله رشید عاکف پاشانك فوق العاده توجه و محبتی جلب ایتمش مسلمان اوغلی مسلمان و عثمانلی اوغلی عثمانی بر ذات اولدیغنی بالبیان مقاله‌کزك بزه عائد اولان قسمنه کچه‌لم. بز مقالهٔ مذکوره‌یی بوزانتیوندن مترجماً نشر ایتمکده سزك ظن ایتدیککز کبی هیچ فکر خفی یاسقیم بسلمه‌دك و بسلمیزده. بو ادعامزه اماسیه لواسنده درت سنه‌لك طور و حرکتمزی اشهاد ایلرم حتی مقاله‌کزده خلقی علیهمده تشویق ایلدیککزه رغماً الیوم دخی افکار عمومیه‌نك لیهمده بولندیغنی ذکر ایله اکتفا ایلرم. هرزمان و مکانده اسلامیته قارشی ابراز حرمتدن کری قالمامشمدر و بوندن‌ده بر وظیفهٔ خلاقیه و انسانیه دیو ایفا ایتمشمدر. مذکور مقاله‌یی ترجمةً نشرنده ایکی املیمز وار ایدی. برنجی = اگر ولی‌الدین بکك ادعا ایلدیکی اوزره بعض غیر مسئول شخصلر طرفندن عثمانلی خرستیانلرینی راحتسز ایده‌جك غیر مناسب بر صورتده جهاد مسئله‌سی اشاعه ایدلمش وایدلمکده ایسه بونك بر چوق امك و فداکارلق اجراسیله میدانه کتیرلمك ایسته‌نیلان اتحاد عثمانیه امل مقدسنه پك بیوك بر زیان ایراث ایده‌جکندن بونك منعی اسبابنه توسل ایدلمسی لزومنك افهامی. ایکنجی، یوق اگر بویله آرالق اشاعتلری یوقده یکن ولی‌الدین بی‌اساس ادعالر ایله بر طاقم مقصد خفیه‌نك قبالی پرده آرقه‌سندن فعله کتیرلمنی استحضار ایدیور ایسه بو اکلاشیله‌رق همان عائد اولدیغی محافلدن شدتله رد و دلائل مقنعه‌سیله تکذیب اولنه‌رق حقیقتك اظهارینی تمهید ایتمك ایدی و بو بابده کوندریله‌جك مقاله‌لری نشر ایتمك اوزره‌ده غزته‌مز صحیفه‌لری آچیق ایدی =.

تأسف اولنور که (اوزی طوغری) قرداشلغمز بونی فهم ایتمیه‌رك یاخود ایتمك ایسته‌میه‌رك بر تعبیر کبار ایله کندیلره مناسب خوش بر تشبهده‌ده بولنمشلر. اناطولی تعبیرنجه بزده بو تشبهه «زوورناده پیشرو اولمز نه چیغیرسه اقباله» دیدك کچدك. هله تحریرینه زحمت بیوردقلری «اماسیه‌ده ارباب انصاف یوقمی.......» سوزلرینی ترجمه و نشر ایدن بر غزته‌جی‌یی کوزلری کوره‌میورمی — اوف...... بینمز چاتلایه‌جق... جمله‌لرینه علاوه بتوریلان نقطه‌لری اکلامق اوزره ابجد حسابنك جمله اصوللریله حلنه چالشدق ایسه‌ده حل ایده‌میه‌رك هر حالده اثر غفلت اوله‌رق صولده قونیلمش صفر دیوب کچدك.

ایمدی اوزی طوغری قرداشمزه حب‌وطن نامنه وکمال خلوصله توصیه ایدرم که ولی‌الدین بکك مقاله‌سنده‌کی ادعالرینك حقیقت اودلیغنی دلائل مقنعه ایله ایضاح و بو صورتله بدایت حربده بعض کیمسه‌لر طرفندن اشاعه ایدیله‌رك عثمانلی عناصر غیر مسلمه‌سنك بر قسم مهمنك

استراحت بشریه‌نك قصواسنه داخل اولدیلر ؟ نه‌ممکن...

بو زواللیلری تربیه ایتملی ! بونلره مکمل بر تحصیل ویرملی ! طریق حیاتده طوته‌جقلری یولی کندیلرینه کوسترملی ، امتزاجسزلغی ازاله ایتملی که بونلر هم شخصلرینه همده بری برلرینه مفید اوله‌جق بر حاله کلسونلر !

یوقسه بر غدارك الندن قورتیلور قورتلماز بونلره ایشته دنیانك اك مکمل آدملری . سعادت بشریه‌یه نائل اولمش مختیارلری دیرسه‌ك پك کونج اولور ایشته نزده بو حالده‌یز . انقلاب ایله زنجیرلری قوپاردق فقط انقلاب حقیقیه مظهر اولمق ایچون سنه‌لره اوزون سنه‌لره محتاجز ...

عثمانلیلری تشکیل ایدن مختلف عناصرك اتحادی امتزاجی بو ملتك قوتی تشکیل ایده‌جکنی بیلیورز بو امل حصوله کلمزسه قوت بوله‌جغمزی بری بریمزله اوغراشه‌جغمزی ، موجودیت سیاسیه‌مزی‌ده محافظه ایده‌میه‌جکمزی اکلایورز فقط بر کره دوشونه‌مکه مختلف عنصر اوره‌سنده رابطهٔ معنویه نه‌در ؟ شیمدی‌یه قدر بو عنصرلردن ملت حاکمه صفتیله قالمش اولان تورکلرله بو عنصردن منقلب اولمش و بونلرك آره‌سنه قاریشمش اولان دیکر عناصر افرادی بر داعیهٔ تضوق ایله بیومشلر آلیشمشلر .

بو حیثیتله مساواتسزلغی التزام ایده‌کلمشلردر بوندن بشقه مکتبلرده ، عائله‌لرده عناصر سائرهٔ عثمانیه‌دن بشقه بر تربیه کورمشلردر .

دیکر عنصرلردن هر بری‌ده کندی حسیات و تمایلاتنه کوره ـ موجودیتی ایچون مبارزه‌لره ، مصارعه‌لره مجادله‌لره معروض قالمق شرطیله ـ بر یول طوتمش بشقه بشقه تربیه‌لره معروض قالمشدر بو حالده هویت معنویه‌جه آره‌ده پك بیوك فرقلر حاصل اولمش بر عنصر ، تکملات فکریه‌جه ایلرویه کیتمش ، دیکری کیری پك کیری قالمش بر عنصر تضوق موجودیتی تأمین ایچون زور و شدته کووه‌نمش دیکری قابلیت و استعدادندن ـ بونلری نشو و نماالندیرمق اوزره ـ استفاده‌یی دوشونمش ...
(مابعدی وار)

عائشه زینل

---

## عکس صداده اوزی طوغرویه

غزته‌مزك ۷ و ۸ نومرولی نسخه‌لرنده «تجاوزمی» سرنامه‌لی مقاله‌کزده ولی الدین بك و (یوزانتیون) غزته‌سندن ترجمهٔ نشر ایلدیکمز اساس مقاله‌سنه دائر یازدقلریکزه جواب اعطاسی (یکن ولی‌الدین بك) مقاله‌سی مناسبتیله «تنقیدمی ولی‌الدین بکه ترك ایله یالکز «یکن ولی‌الدین» بر

# اماسیه

طشره منادیسی

برنجی سنه | شباط ۳۰ سنه ۳۲۷ | نومرو ۱۰

## تربیهٔ اجتماعیه

انقلاب ، انقلاب سیاسی‌یه موفق اولدق ، سنه‌لردن بری ظلم و اعتساف آلتنده ازیلن ملت، حق حریتی اکتساب ایچون بر خطوه آتدی . حکمدار مستبد سنه‌لرجه تحصنگاهی اولان سراینده‌ن چیقارلدی . تختدن اسقاط ایدلدی .

طرز حکومت دکیشدیرلدی . حکومت مستبده یرینه حکومت مشروطه قائم اولدی . حریت ، مساوات ، عدالت اعلان ایدلدی کیمسه انکار ایتمز بو انقلابك اهمیتی پك بیوکدر...

فقط بردنبره ملیونلرجه انسانك هویت معنویه‌سنی تبدیل ایده‌جك بر قوهٔ ساحرانه‌یی حائز دکلدر . مختلف عنصرلردن مرکب اولان بو ملت بر چوق قیدلر آلتنده ایدی زنجیرلره باغلی ، اشکنجه‌لره معروض ایدی . شمدی بو قیدلر قوپارلدی ، زنجیرلر قیرلدی . اشکنجه‌لره نهایت ویرلدی یعنی بو مقصدله انقلاب عثمانی وجود بولدی .

فرض ایدیکز که : بش اون یتیم اوکسوز چوجق بر خائنك النه دوشدی بو خائن چوجقلری بر یره قپاتدی ، کیجه کوندوز چالیشدیردی ، بونلرك تربیه‌سنه تحصیلنه هیچ باقمدی ، انجق بونلرك سعی و عملندن اعظمی درجه‌ده استفاده نصل ممکن ایسه یالکز بو نقطه‌یه کوز دیکدی فقط بو شخص خائن و غدار اولمقله قالمیوردی مغلوب کیف و هوس ، مجلوب استبداد و احتراص ایدی .

چوجقلری دوکر ، ازدر ، وجودلرینی جریحه‌لر ایچنده براقیر ، طپاق التنده ترك حیات ایدنلری سوروکله‌یوب آتدیریردی ؛ چوجقلری ، بری بریله خوش کچنمسون ، کندینه قارشو کلمسون دیه بونلر آره‌سنه نفاق اکه‌ر بونلری هم کندی دوکر هم‌ده بری بریله بوغشدیریردی .

ینه فرض ایدیکز که : بو خائن و غدار بر دست عدالتك شدتیله دوریلدی کیتدی ، چوجقلر الندن قورتارلدی . شمدی : دیه بیلیرمی‌یزکه بونلر اسارتدن اشکنجه‌دن قورتلمقله همان سعادت.

# ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
## ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱՊԻՊԵԱՆ
### Ա.ՄԱՍԻԱ.

Ոսկի *գուռոն* եւ *պրիճ* նաեւ *սելլիւ-լոյտ* արհեստական ատամներ շինելու Ամերիկեան մեթոտը սորվիլ ուզող բոլոր ատամնաբոյժներու կը յայ-տարարէ. թէ ինք պատրաստ է այդ մէթոտը սորվեցնել նպաստաւոր պայմաններով:

سیغورطه‌جی

سیمون فارقیان

آماسیه

---

آلیانسه عمر سغورطه‌سی لانقاشه حریق

سیغورطه قومپانیه‌لرینك اجنتی‌در.

مناسب شرائطله هر نوع سیغورطه ایشلری

یاپار. آرزو ایدنلر بر دفعه تجربه ایتسونلر

چیشیان ارتین اغا دکانك اتصالنده باتنی

٥٠ (الی) پارده معدن کوری صاتیور.

هر کس فرصتدن استفاده ایتسون.

## ՓՈՒԹԱՑԷՔ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԴԻՄԵԼ
### ԼԵՐՍԱՊԷՏ ԱՅՎԱԶԵԱՆ
### ԶԻՆԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ
### ԲԱԼԸՔ ԱՇԸ—ՍԱՄՍՈՆ

Որ փոխանակ ամէն կարգի ու ամէն տե-սակ փամփուշտ 0 | 25 զեղչով: Թող գի-տնան, բոլոր անոնք օ,տուէք գէտցողները վստահ ըլլալով թէ իրենց ամեն նկատի պի-տի առնուի մէջս: Ան փորձեցէք եւ հա-մոզուեցէք:

# ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

طشره اجنتلریمز.

Մարզուան.- Տիար Անդրանիկ Գլտեան

تحریرات مدیری محمد رفعت بك چوروم

Չորում.- Արժ. Տ. Անանիա Քհյ. Տիվանեան
Վեզիր Քէօփրիւ.- Տիրf. Յովսէփ Քիրեճեան
եւ Գ. Սեօղէմեզեան

قومیسر حافظ افندی .- سیواس

Սիվաս.- Տիար Արամ Ակինեան
Պաֆրա.- « Նշան Շիրինեան
Գիւրուն.- « Կարապետ Սամիրճեան
Ամասիա.- « Վահան [illegible]եան
Չարշամպա.- Տիար Միհրան [illegible]ուտեան
Զիլէ.- Տիար Մանուկ Թօքայեան
Տրապիզոն.- Տիար Ստեփան Պալ օզեան
Ակն-ասնի գիւղ « Ներսէս Համալեան
Սանճուրլու.- « Հրանդ Եկմեքեան
Զարա.- Տիար Կրպտ. Ատատուրեան
Կարին.- « Հայկ Մանկասարեան
Քղի.- « Մարտիրոս Արապեան
Մուշ.- « Հայկ Միրիճանեան
Օրտու.- « Ստեփան Գասպարեան
Բալու.- « Արժ. Մուշեղ Քհյ. Տէրոհեան
Թոքատ.- « Մկրտիչ Մելքոնեան
Հերէկ.- « Սարգիս Գարագաշեան
Նիկսար.- « Ստեփան Պէճիճեան
Կ. Պոլիս.- « Յակոբ Աւետիսեան
« « Հմայեակ Արամեանց
Կիրասոն.- « Անտոն Սոմունճեան
Կեսարիա.- Տիար Մինաս Մինասեան
Գաուքէյսոնի.- « Յար. Փափազեան
« « Աղեք. Կիւլպէնկեան
Եոզղատ.- « Բարսեղ Ծերունեան
Արաբկիր.- « Միհրան Կիւրգաճեան
Պաղըքէսիր.- « Անուշաւան Սահակեան
Հալէպ.- « Օննիկ Թոսպաթեան
Ռոտոսթո.- « Տր. Նուպիր Ա. Պէւռնճեան
Քէնկիրի.- « Մուշեղ Էմիրխանեան
Աֆիոն-Գարահիսար Տիար Սարգիս Տէ-միրճեան

صاحب امتیاز و
مدیر مسئولی
حایقازون طبییان

# اماسیه

شرائط اشترا
بر سنه‌لکی بر مجید
الی آیلغی یارم مجیددر

سر محرری مناس پیکجیان

یاخود

طشره منادیسی

سیاسی فنی ادبی اقتصادی و اخلاقی غزته در
هر اون بش کونده بر نشر اولنور

برنجی سنه — ٣٠ شباط ١٣٢٧ — نومرو ١٠

محتویات

تربیهٔ اجتماعیه — عاشق زینل
عکس صداده اوزی طوغرویه — مدیر مسئول حایقازون طبییان
مدحت پاشا و ادارهٔ مملکت — اوراق وارده — شئونات

مطبعه‌مزده ترکجه ارمنیجه رومجه فرانسزجه و انکلیزجه لسانلریله هر نوع اعلانات، اوراق تجاریه، قارت ویزتلر، مکتوب باشلری، کتابلر، غزته‌لر و مطبوعاته عائد سائر هر نوع ایشلر غایت تمیز و مزاق اوزره طبع اولنیور. مقصد یکانه‌مز محترم مشتریلرمزی ممنون قلماقدر.

هوونانیان و یاردیمیان شرکاسی

Տպարանիս մէջ Տաճկերէն, Հայերէն, Յունարէն, Ֆրանսերէն, եւ Անգլիերէն լեզուներով ամէն տեսակ Ազդեր, Վաճառականական թղթեր, Քարտ վիզիթներ, Նամակագլուխներ, Գրքեր, Թերթեր եւ տպագրական ուրիշ ամէն տեսակ գործեր խիստ մաքուր եւ ճաշակաւոր կը տպագրուին:
Միակ նպատակնիս է գոհ թողուլ յարգելի յաճախորդները:

ՅՈՎՆԱՆԵԱՆ ԵՒ ԵԱՐՏԸՄԵԱՆ

آماسیه‌ده
مطبعهٔ هوونانیان و یاردیمیان